ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՑՄԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Գաբ. դոկտոր Ա. Ի. ՀԱՄԲԱՐՅՈՒՆ

XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում դեռ առանձնանում էին ֆեոդալական հասարակարգին յուրահատուկ գյուղացիության սոցիալական տարբեր խմբերը։ Կային պետական, կալվածատիրական, [illegible] քիւլգարական, աղալարական, պետական-հասարակական, մանրապետական և այլ կատեգորիաների գյուղացիներ։ Ամենաբազմամարը պետական գյուղացիներն էին, որոնք ապրում էին երկրի բոլոր գավառներում և [illegible] մում ամբողջ գյուղացիության 72 տոկոսը։ Նրանց թվաքանակը համարյա ամենուրեք աճում էր։ Միայն 19 տարվա ընթացքում (1867—1886 թթ.) տուն 30000-ից այն հասավ 103051 տնտեսության։ Դա պայմանավորված [illegible] միայն բնական աճով, այլև նոր հողերի միացմամբ և գաղթականների ներհոսքով։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական [illegible] հետևանքով Իրանատանից միացավ պատմական Հայաստանի [illegible] տարածքներից մեկը՝ Նախիջևանի մարզը իր [illegible] գյուղերով։ Հետագա տարիներին Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան, մասնավորապես Օրեանի նահանգ գաղթեց մոտ 2000 [illegible] հայ գյուղացիներ։ Արևմտյան Հայաստանից եկան Արևելյան Հայաստան նաև հետագա տարիներին, մասնավորապես 1890-ական թթ. գյուղական իրավունքների կողմից կազմակերպված հայկական [illegible] ամամամ։

Երկրի տարբեր շրջաններում պետական գյուղացիներ [illegible] էին տարբեր չափի հողատարածքներ, իսկ մի քանի հայվով ամեն մի տնտեսություն ուներ 16 դես. և երկու սեռի յուրաքանչյուր անձ՝ 1,90 դես. ամեն [illegible]։ Դրանք պայմանական, չափազանցված տվյալներ են։ Իրականում երանց հողատարածքներն ավելի քիչ էին։ Հատկանշական է, որ գյուղացիների քանակական աճի հետևանքով նրանց հողերը գնալով կրճատվում էին։ Պետական գյուղացիների օգտագործմանն էին հանձնված արոտավայրեր, մարգագետիններ, վարելահողեր, կալատեղեր, բանջարանոցներ ու այգիներ։ Առաջին երեքը մնում էին և սեփականության իրավունքով պատկանում էին պետությանը, իսկ մյուսները խիստ փոքրաքանակ էին և նույն իրավունքով պատկանում էին գյուղացիներին։ Արոտավայրերից ու մարգագետիններից գյուղացիներն օգտվում էին կոլեկտիվ, իսկ վարելահողերից՝ վերաբաշխման կարգով։ Երկրի տարբեր շրջաններում վերաբաշխումները կատարվում էին տարբեր ժամկետներում (1½, 3, 5, 10 տարին մեկ անգամ) և տարբեր սկզբունքներով (ըստ բնակիչների անձանց թվի, անասունների գլխաքանակի, վճարած հարկայափերի և այլն)։ 1880—1890-ական թթ. ցարական կառավարությունը, համայնքի պահպանության նպատակով, փորձեց սահմանել վերաբաշխումների որոշակի ժամկետ, բայց ապարդյուն։

Արևելյան Հայաստանի պետական գյուղացիների հետագա մեծամասնությունը նատակից երկրագործներ էին, ունեին փոքրամասնություններ՝ մոտ 4 տո-

---

1 Տե՛ս Հայ ժողովրդի պատմության հ. 11. Երևան, 1961, էջ 33—34։

2 Տե՛ս ՎՍՀՍ ԿԳԳԱ, ֆ. 5, գ. 408, թ. 23։ Сборник статистических данных о [illegible] землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края. Тифлис, 1899, с. 18—20, 326. Приложение IV, с. 2—25, 86

3 ՆՍՀՍ ԿԳԳԱ, ֆ. 1268, գ. 13, գ. 219, թ. [illegible]

4 Сборник статистических данных. . . с. 323

կոսր, քոչվորներ ու կիսաքոչվորներ։ Դրանք հիմնականում քրդեր (եզդիներ) ու մասամբ ադրբեջանցիներ էին և զբաղվում էին գերազանցապես անասնապահությամբ։ Ուսումնասիրողները հաստատում են, որ այդ քոչվորներն ու կիսաքոչվորները համեմատաբար քիչ հողատարածություններ ունեին, քան նստակյաց երկրագործները։

Պետական գյուղացիները պետական հողերից օգտվելու համար արքունիքին վճարում էին՝ ծխահարկ (2—10 ռ.), հողահարկ (յուրաքանչյուր տնտեսություն 25 կ. մինչև 1 ռ.) և տեղական տուրք (յուրաքանչյուր ծխից կամ տնտեսությունից 2— ռ.)։ Նրանք կատարում էին պետության օգտին նաև զանազան պարհակներ (կառուցում էին ճանապարհներ, կամուրջներ, զանազան շենքեր, տեղափոխում էին բեռներ և այլն)։ Թեև իշխանությունները օրենքով պարտավոր էին գյուղացիներին հարկի տակ դնելիս հաշվի առնել հողերի տարածությունն ու եկամտաբերությունը, բայց շրջանցում էին դա և հարկում իրենց ցանկացած չափերով՝ սովորաբար նրանց կարողություններից բարձր գումարներով։ Այդ գումարներն ըստ առանձին տնտեսությունների բաժանում էին ունևորները, որոնք ամբողջ ծանրությունը գցում էին ներքնաշերտերի վրա։ Իշխանությունները հարկերը հավաքելու համար գործադրում էին զանազան միջոցներ, ընդհուպ մինչև ծեծ ու բանտարկություն։ Գյուղացիների հարկերը տարեցտարի մեծանում էին և սաստիկ բնույթ ընդունում պաշտոնյաների գործադրած չարաշահումների հետևանքով[5]։

Պետական գյուղացիները իշխանությունների կողմից դատապարտված էին ոչ միայն տնտեսական կեղեքման, այլև դասային անիրավահավասարության։ Այդուհանդերձ նրանք ունեին որոշակի իրավունքներ։ 1866 թ. կանոնադրության համաձայն նրանք կարող էին մասնակցել գյուղական վարչության ընտրություններին, ընտրել կամ ընտրվել, բողոքել իրենց հարստահարողների դեմ, կարող էին պահանջել լրացուցիչ հողաբաժին, հարկերի իջեցում, իրավունք ունեին թողնել իրենց գյուղը և տեղափոխվել այլ վայր, մեկնել տարագնացության կամ արտագնացության, անցնել այլ դասեր, հանդես գալ դատարաններում և պաշտպանել իրենց շահերը, կրթություն ստանալ, պահել դպրոց և կուլտուր-կրթական այլ հաստատություններ, շարունակել ազգային ավանդույթները և այլն։ Գյուղացիները թեև իրավունք չունեին վաճառել, գրավ դնել կամ նվիրել իրենց հողաբաժինները, բայց նրանց թույլատրվում էր դրանք բաժանել իրենց հարազատների միջև, ժառանգությամբ տալ, արոտավայրերի և ոչ պիտանի հողերի հաշվին սահմանները ընդարձակել, մշակել ցանկացած կուլտուրաները, ցանքերն անցկացնել և ոռոգել իրենց տարածքները, պարսպապատել դրանք, նրանց վրա զանազան շենքեր կառուցել և այլն։ Սակայն գյուղացիները չէին կարողանում օգտվել այդ բոլոր իրավունքներից նախ այն պատճառով, որ չգիտեին, թե իրենց ինչ իրավունքներ են տված, երկրորդ՝ չէին ունենում տնտեսական հնարավորություններ, երրորդ՝ գործավարությունը տարվում էր ռուսերեն, որն այն ժամանակ նրանց մեծամասնության համար անհասկանալի էր։

Սահմանված օրենքներից ավելի քիչ էին օգտվում կիսաքոչվորներն ու քոչվորները, որոնք թողված էին դարավոր հետամնացության ու խավարի մեջ։ Նրանց մոտ դեռ գերիշխում էին պապենական սովորույթները։ Ս. Ա. Եղիազարյանը գրում է. «1884 թ. ուսումնասիրելով կիսանստակյաց եզդիների կենցաղը, ես եկա այն համոզման, որ նրանց համար Կանոնադրությունը (խոսքը 1866 թ. կանոնադրության մասին է—Ա. Հ.) մնում է իբրև մեռած տառ։ Այս ժողովուրդը, խուսափելով մեր դատական ու վարչական իշխանու-

[5] Տե՛ս Ա. Ա. Ավդալբեգյան. Գյուղի հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917). Երևան, 1959, էջ 418, 436—437.

[6] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 23, գ. 212, թ. 269։ А. Н. Савков. О необходимости введения земских учреждений в Закавказье. Тифлис, 1903, с. 15.

թյուններից, առաջվա պես ձգտում է ցնցել իր գեղջկին իշխանությունները։ Նա ապա շարունակում է, թե ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բացի եզիդիներից, կանոնադրությունը չի կիրառվում նաև մյուս կիսաքոչվոր ու քոչվոր ավագանիների մոտ. «Միայն քրիստոնյա բնակչությունն է, որ սկսում է ուրացնել հասարակական կառավարման նոր ձևերը»[8]։

Կալվածատիրական գյուղացիները իրավաբանորեն նույնպես կոչվում էին պետական կամ արքունական, բայց սեփականական հողերում բնակվող գյուղացիները 1870-ական թթ. ռեֆորմներից հետո նրանք սկսեցին կոչվել ժամանակավորապես պարտավոր գյուղացիներ կամ չինականներ. Նրանք կազմում էին ամբողջ գյուղացիության մոտ 28 տոկոսը և բնակվում էին երկրի համարյա բոլոր գավառներում, բացառությամբ Ալեքսանդրապոլի գավառի ու Կարսի մարզի, այսինքն՝ այն շրջանների, ուր չկար կալվածատիրական հողատիրություն։ Այդ գյուղացիները բաժանվում էին տարբեր խմբերի և կոչվում ֆեոդալական հողատիրության անուններով՝ մուլքադարական, պետական-մուլքադարական, թիուլդարական, ագալարական-բեգական և այլն։ Դրանցից ամենաբազմամարդը մուլքադարական գյուղացիներն էին, որոնք ապրում էին Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի և մասամբ Նոր Բայազետի գավառներում։ Նրանց թանակը նույնպես ավելանում էր (1870 թ. կազմում էր 14560, իսկ 1886 թ.՝ 23640 ծուխ[9]), որը տեղի էր ունենում, մի կողմից, բնական աճի, մյուս կողմից՝ քոչվորների ու կիսաքոչվորների մուլքադարական տիրույթներում հաստատվելու հետևանքով։ Մուլքադարական գյուղացիների մի մասը՝ 2/3-ը, բնակվում էր այսպես կոչված մահմեդական բարձր դասին պատկանող, իսկ մյուսը՝ 1/3-ը, այդ դասին չպատկանող հողատերերի տիրույթներում[10]։ Գյուղացիական ռեֆորմը կիրառում տարածվեց դրանցից առաջինների (1870 թ. մայիսի 14-ին), իսկ հետո՝ երկրորդների վրա (1877 թ. սեպտեմբերի 1-ին)։

Իշխանությունները, ռեֆորմն անցկացնելիս, բարձր դասին պատկանող կալվածատերերին ավելի շատ իրավունքներով օժտեցին, քան բարձր դասին չպատկանող կալվածատերերին։ Առաջիններին թույլատրեցին իրենց ձեռքում պահել բոլոր հողերի 1/3-ը, սահմանեցին փրկագնվող հողերի չափերը (միջինում 7,5 և մաքսիմում 15 դես.), գյուղացիներին պարտավորեցին տերերին վճարել նաև իրենց այգիների ու բանջարանոցների համար, մինչդեռ երկրորդներին ոչ միայն արգելեցին խլել գյուղացիական հողակտորները, այլև առաջարկեցին իրենց տարածություններից գյուղացիներին լրացուցիչ հող տալ, եթե նրանց հողաբաժինները պակաս են սահմանված չափից (ընտանիքի ամեն մի աշխատող անդամին 5 դեսյատինից ոչ պակաս), գյուղացիներին թույլատրեցին փրկագնել այնքան հող, որքան կարող են և ազատեցին նրանց այգիների ու բանջարանոցների համար հողատերերի օգտին տրվելիք տուրքերից։ Այդպիսով, ռեֆորմի հետևանքով բարձր դասին չպատկանող հողատերերի գյուղացիների դրությունը այդ դասին պատկանող հողատերերի գյուղացիների համեմատությամբ փոքր-ինչ թեթևացավ։

Պետական-մուլքադարական գյուղացիները բնակվում էին պետական-մուլքադարական հողերի վրա։ Գյուղացիության այս կատեգորիան առաջացավ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումից հետո, երբ մի շարք մուլքադարներ փախան Պարսկաստան, և ցարական իշխանությունները, պետականացնելով նրանց տիրույթները, սկսեցին մնացող մուլքադարների հետ միասին գյուղացիներից մուլք հավաքել։ Նրանք իրար միջև բաժանեցին ու

[7] С. А. Егиазаров. Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община. Казань, 1889, с. 103.

[8] Նույն տեղում, էջ 104։

[9] Տե՛ս Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в., составил проф. В. А. Рштуни при участии К. Степанина. Ереван, 1951, с. 343—351.

[10] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 21, գ. 199, թ. 13։

թե գյուղերը. այդ գյուղացիական տնտեսությունները, որի հետևանքով միև-նույն գյուղն ընկավ թե՛ պետության և թե՛ մուլքադարների տիրապետության տակ։ 1880-ական թթ. կեսերին Երևանի նահանգում հաշվվում էր 88 պետա-կան-մուլքադարական գյուղ, որից 24-ը՝ Երևանի գավառում, 16-ը՝ Էջմիածնի, 19-ը՝ Սուրմալուի, 6-ը՝ Շարուր-Դարալագյազի և 23-ը՝ Նախիջևանի գավառնե-րում[11]։ Այդ գյուղերում 1870-ական թթ. սկզբներին բնակվում էին 3163, իսկ 1886 թ.՝ 4676 տնտեսություններ[12]։ 1870 թ. գյուղացիական ռեֆորմը տարածվեց նաև պետական-մուլքադարական գյուղերի վրա, սակայն կանոնագրերի կնքու-մը երկար ժամանակ տեղի չունեցավ, իսկ 1903 թ. իշխանությունները որոշեցին նրանց հողաբաժինները թողնել անփոփոխ։

Մուլքադարական-թիուլդարական գյուղացիները բնակվում էին մուլքադար-ների ու թիուլդարների տիրույթներում և նրանց հողերից օգտվելու համար վճա-րում էին որոշակի հարկեր ու տուրքեր։ Այդ գյուղացիները փոքրաթիվ էին. 1886 թ. կազմում էին [illegible] տնտեսություն և ապրում Երևանի ու Էջմիածնի գա-վառների 4 գյուղերում։

Գրականության մեջ տվյալներ չկան մուլքադարական այդ տարբեր գյուղա-ցիական խմբերի հողաբաժինների մասին առանձին-առանձին։ Բարեբախտա-բար, պետական արխիվներում պահպանվել են նրանց վերաբերյալ կանոնա-գրերը, որոնք կազմվել են 1872—1873 թթ. գյուղացիական ռեֆորմի կամ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության կենսագործման համար։ Այդ կանո-նագրերը, անշուշտ, ունեն մի շարք թերություններ, բայց և այնպես հնարա-վորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու մուլքադարական տարբեր խմբերի գյուղացիների հողատարածքների մասին։

Մենք ուսումնասիրեցինք բարձր դասին պատկանող հողատերերի 30, ցածր դասին պատկանող հողատերերի 4 և պետական-մուլքադարական 2 (ըն-դամենը 36) գյուղերի կանոնագրերը։ Նրանցում բնակվում էին 1405 տնտե-սություն կամ 6016 ոգամարդ[13]։ Մեր հաշվումները ցույց տվեցին, որ բարձր դասին պատկանող հողատերերի 30 գյուղերում բնակվում էին 1186 տնտե-սություն կամ 5098 ոգամարդ։ Յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 6,7 և յուրաքանչյուր ոգամարդ՝ 1,6 դես. վարելահող, այգի ու տնա-մերձ։ Ցածր դասին պատկանող հողատերերի 4 գյուղերում բնակվում էին 154 տնտեսություն կամ 565 ոգամարդ։ Յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 8,9 և յուրաքանչյուր ոգամարդ՝ 2,4 դես. վարելահող, այգի ու տնամերձ։ Հաշվումները այնուհետև ցույց տվեցին, որ 2 պետական-մուլքադարական գյուղերում բնակվում էին 66 տնտեսություն կամ 353 ոգամարդ։ Յուրաքան-չյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 2,6 դես. և յուրաքանչյուր ոգամարդ՝ 0,5 դես. վարելահող, այգի ու տնամերձ։ Ինչ վերաբերում է մուլքադարական-թիուլդարական գյուղացիներին, ապա նրանց մասին տեղեկություններ գտնել մեզ չհաջողվեց։

Երբ համեմատում ենք մուլքադարական գյուղացիների հողատարածքները պետական գյուղացիների վերոհիշյալ հողատարածքի հետ, տեսնում ենք, որ նրանք ավելի քան 2 անգամ պակաս հող ունեին, քան պետական գյուղացինե-րը։ [illegible] այդ տարբերությունը պահպանվում է այն ժամանակ, երբ վարե-

[11] Տե՛ս Обзор Эриванской губернии за 1887 г., с. 5.

[12] Տե՛ս Аграрная политика царизма ..., с. 343—351.

[13] Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 4, թ. 9—10, գ. 13, թ. 25—34, գ. 16, թ. 9—10, 24, թ. 20, գ. 36, թ. 10—11, գ. 26, թ. 53—74, գ. 21, թ. 40—50, գ. 17, թ. 90, գ. 45, թ. 14—15, գ. 35, թ. 23—27, գ. 54, թ. 34—41, գ. 50, թ. 7—8, գ. 70, թ. 22—27, գ. 69, թ. 13—17, գ. 67, թ. [illegible]—28, գ. 63, թ. 15—24, գ. 64, թ. 23—26, գ. 30, թ. 7, գ. 53, թ. 4—5, գ. 34, թ. 6, գ. 80, թ. 16—20, գ. 88, թ. 11—12, գ. 14, թ. 9—10, գ. 35, թ. [illegible], թ. 6, գ. 59, թ. 16—20, գ. 36, թ. 27—34, գ. 6[illegible], թ. 5, գ. 79, թ. 13—15, գ. 78, թ. 15—16, 94ա—101, գ. 86, թ. 70—81, գ. 95, թ. 47—75, գ. 104, թ. 27—45, գ. 108, թ. 56, գ. 81, թ. 11—37, գ. 118, թ. 27—29, գ. 15, թ. 13։

յանների հետ միասին վերցնում ենք նաև պետական գյուղացիների տրուած վայրերն ու երկրագործության համար ոչ պիտանի տարածությունները։ Իսկ եթե համեմատենք միայն նրանց վարելահողերը, կտեսնենք, որ կալվածատիրական գյուղացիների և պետական գյուղացիների տարածքները համարյա նույնն էին։ Այսպես. Երևանի եռահանգում 1870-ական թթ. կալվածատիրական գյուղացիների յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 8,83 դես. և յուրաքանչյուր տղամարդ՝ 1,91 դես. վարելահող։ Պետական գյուղացիների յուրաքանչյուր տնտեսություն 1890-ական թթ. ուներ 7,52 դես. և երկուսների յուրաքանչյուր անձ՝ 0,90 դես. վարելահող[14]։

Այդ տարբերությունը մեծ մասամբ հետևանք է այն բանի, որ կալվածատիրական գյուղացիների հողաբաժինները հաշվի են առնված 1870-ական, իսկ պետական գյուղացիներինը՝ 1880-ական թթ.։ Պետական գյուղացիների 10 տարվա բնական աճը, անկասկած, կհանգեցներ նրանց հողաբաժինների նրվազեցմանը։ Սակայն այդ տվյալները պաշտոնյաների կողմից նույնպես յուրացնված են։ Իրականում գյուղացիների հողաբաժինները թիչ էին։

Ի տարբերություն պետական գյուղացիների, որոնք վարելահողերից օգտվում էին համայնական կարգով, մուլքագրական գյուղացիները 1870 թ. ռեֆորմից հետո սկսեցին օգտվել ծխային կարգով[15]։ Պետական գյուղացիները իրենց հողաբաժինները փրկագնելու իրավունք չունեին, մինչդեռ մուլքագրական գյուղացիները ունեին այն։ Ի դեպ՝ դեռ 1801 թ. ցարական կառավարությունը Ռուսաստանի պետական գյուղացիներին թույլատրեց անփականության իրավունքով հողեր ձեռք բերել, իսկ 1845 թ. այդ թույլտվությունը տարածվեց նաև Անդրկովկասի վրա։ 1860-ական թթ. կառավարությունը սահմանեց, որ կալվածատիրական գյուղացիները, տերերի ցանկության դեպքում, կարող են փրկագնել իրենց հողաբաժինները։ Բայց այդ օրենքները առաջինը պետական գյուղում չկիրառվեց, իսկ երկրորդը կալվածատիրական գյուղում սկսեց գործադրվել միայն 1870-ական թթ.։ Ի տարբերություն եվրոպական Ռուսաստանի, Արևելյան Հայաստանում կառավարությունը գյուղացիներին վարկեր չտրամադրեց իրենց հողաբաժինները փրկագնելու համար, իսկ գյուղացիները չէին կարող սեփական միջոցներով փրկագնել։ Դրա հետևանքով Արևելյան Հայաստանում հողաբաժինների փրկագնում համարյա տեղի չունեցավ։ Սովորական է նշել, որ հետռեֆորմյան 30—33 տարվա ընթացքում փրկագնվեց ընդամենը 40 դես. հողաբաժին[16]։

Մուլքագրական գյուղացիները, քանի դեռ չէին փրկագնել իրենց հողաբաժինները, պարտավոր էին մուլքագրողներին վճարել նախկին հարկերն ու տուրքերը, այսինքն՝ բերքի 1/5-ը և գրամ՝ յուրաքանչյուր 360 քառ. մետր բանտարանոցի համար 80 կ., իսկ այգու համար՝ 1 ռ. 20 կ.։ Միաժամանակ պետք է կատարեին զանազան պարտություններ (տերունական բաժնի տեղափոխում, մատնանշված վայրը, տնային ծառայություններ և այլն), շարունակելու էին տալ օրենքով չսահմանված, բայց կենցաղում մտած, սովորույթ դարձած ավելորդները։ 1871 թ. Երևանի եռահանգի ժանդարմական վարչության պետը նշում էր, որ յուրաքանչյուր գյուղ այդ տնվերները համար ծախսում է տարեկան մինչև 180 ռ., իսկ յուրաքանչյուր շունչ՝ 20 կ.[17]։ Առանձնապես ուժեղ էին բարձր դասին պատկանող մուլքագրողների իշխանության տակ բնված գյուղացիների հարստահարումները։ Օգտվելով 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությամբ իրենց շնորհված արտոնություններից, նրանք ավելի էին փոքրացնում գյուղացիների

[14] Տե՛ս Сборник статистических данных. Приложение 4, с. 18—25

[15] Ի դեպ՝ Արևելյան Հայաստանի հողային հարաբերություններին քննադատական Ս. Ա. Ծդիկարովը նշում է, որ մի շարք մուլքագրական գյուղերում համայնական հողատիրությունն այնպես կայուն էր, որ անգամ կանոնադրության կնքումից հետո էլ գյուղացիները վարելահողերից ու ոչ տարածքներից շարունակում էին օգտվել համայնական կարգով (տե՛ս նույն տեղը, էջ 141)։

[16] Տե՛ս Обзор Эриванской губернии за 1903 г., с. 7.

[17] Տե՛ս ԱԵՀՊ ԳՈՒԱ, ֆ. 109, բաժ. III. IV տարման բաժին, գ. 243, թ. 3—11։

հողատարածքները և սաստկացնում շահագործումը։ Այդ կանոնադրությունը սահմանում էր, որ գյուղացիները պարտավոր են մուլքադարների վճարումները կատարել այնպիսի խստությամբ, ինչպես պետականը։ Հաշտարար միջնորդներին իրավունք էր վերապահվում օգնության հրավիրել ոստիկանությանը, եթե գյուղացիները կփորձեն դիմադրել, թույլատրվում էր բռնագրավել գյուղացիների շարժական գույքի մի մասը և վաճառել հօգուտ կալվածատիրոջ, ուղարկել նրանց դատումների՝ դարձյալ հօգուտ կալվածատիրոջ։ Օրենքը սահմանում էր, որ պետք է բռնագրավել վճարումներից հրաժարվող գյուղացու նույնիսկ հողաբաժինը և մուլքադարի համաձայնությամբ տալ ուրիշին։

Այդուհանդերձ, ռեֆորմը մուլքադարական գյուղացիներին քաղաքացիական որոշ իրավունքներ տվեց։ Կանոնագրերը պետք է կազմվեին ոչ միայն մուլքադարների, այլև գյուղացիների ներկայությամբ, հաշտարար միջնորդը իրավունք չուներ կնքել դրանք առանց կողմերի համաձայնության։ Գյուղացիները կարող էին փրկագնել իրենց հողաբաժինները որպես սեփականություն և այնուհետև վաճառել, գրավ դնել կամ նվիրել համայնքում, իսկ այգիներն ու արդյունագործական ձեռնարկությունները՝ նաև համայնքից դուրս։ Նրանք կարող էին շենքեր կառուցել հողաբաժիններում և մշակել իրենց ցանկացած կուլտուրաները՝ առանց հողատիրոջ թույլտվության։ Իրավունք ունեին շրջանցել համայնքային երաշխավորությունը և ամեն մեկն առանձին կատարել տնտեսական պարտավորությունները։ Նրանք կարող էին բնավճարները վերածել փողի և վճարել դրամով։ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը թեև թույլատրում էր գյուղացիներին ուղարկել կալվածատիրոջ օգտին դատումների, բայց միաժամանակ սահմանում էր, որ դա չպետք է կատարել նրանց ցանկության հակառակ։ Այս կամ այն կարևոր հարցի լուծման համար պահանջվում էր համայնքի քվեատու անդամների 2/3-ի համաձայնությունը։ Գյուղացիներն իրավունք ունեին բողոքել պաշտոնյաների ու մուլքադարների դեմ, պաշտպանել իրենց շահերը դատարանում, պահանջել լրացուցիչ հողաբաժին, ոռոգող ջուր, մեկնել արտագնացության, իսկ պարտքերը վճարելուց հետո՝ ընդհանրապես հեռանալ գյուղից։ Նրանք իրավունք ունեին բացել ազգային դպրոցներ և կուլտուր-կրթական այլ հաստատություններ։ Սակայն ինչպես պետական, այնպես էլ մուլքադարական գյուղացիները ցարական դաժան վարչակարգում և սանձարձակության պայմաններում հաճախ չէին կարողանում օգտվել այդ իրավունքներից։

Թիուլդարական գյուղացիները 1870-ական թթ. սկզբներին կազմում էին 946 տնտեսություն և բնակվում էին Երևանի (243 տնտես.), Էջմիածնի (105 տնտես.), Նոր Բայազետի (142 տնտես.) և Նախիջևանի (456 տնտես.) գավառներում։ 1875 թ. մայիսի 14-ին հրատարակվեցին թիուլդարների և թիուլդարական գյուղացիների հարաբերությունների մասին կանոններ, որոնց համաձայն գյուղացիները անցնում էին պետական գյուղացիների շարքը և գրվում պետական հարկերի տակ, իսկ թիուլդարներին արքունական գանձարանից վճարվում էր թոշակ՝ նրանց նախկին եկամուտների չափերով։ Բայց քանի դեռ այդ կանոնները չէին իրագործվել, գյուղացիները շարունակելու էին «իրենց» տերերին վճարել բերքի $^3/_{30}$-ը և յուրաքանչյուր ծխից՝ 2 ռ. 50 կ.[18]։ Այդ նորմերը թեև սահմանված էին պետականորեն, բայց թիուլդարները չէին բավարարվում դրանցով և գյուղացիներից պահանջում էին ավելին։ Այսպես, Նոր Բայազետի գավառի Բջնի գյուղում թիուլդարը ամեն տարի գյուղացիներից հավաքում էր բերքի $^3/_{30}$-ը, յուրաքանչյուր տնտեսությունից՝ 2 ռ. 50 կ., ոչխար կամ գառ, յուղ, պանիր, վառելիք, շինանյութ, հարկադրում էր կատարել զանազան պարտույթներ և այլն[19]։ Ստացվում էր այնպես, որ թիուլդարական գյուղացիների

18 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 19, գ. 107, թ. 6—12։

19 Տե՛ս Крестьянское движение в Армении в XIX веке, составил В. А. Риштуни при участии К. Степаняна. Ереван, 1949, с. 95.

ֆեոդալական կեղեքումները քիչ էին տարբերվում մուլքադարական գյուղացիների հարստահարումներից։

Ճանաչելով թիուլդարական իրավունքը ցմահ, ցարական իշխանությունները անվերջ ձգձգում էին 1875 թ. մայիսի 14-ի կանոնների կենսագործումը, իսկ թիուլդարները գնալով մահանում էին։ 1875 թ. Երևանի նահանգում հաշվըվում էր 39 թիուլդար, 1887 թ.՝ 20, իսկ 1903 թ.՝ մնացել էր 12[20]։ Կովկասի գլխավոր կառավարչապետը 1903 թ. արդեն գրում էր ներքին գործերի մինիստրին, որ թիուլդարների մահով «գյուղացիները աստիճանաբար ազատվում են նրանց կախումից»[21]։ Ազատվող գյուղացիները անցնում էին պետական գյուղացիների շարքը և հարկվում նրանց հարկման սկզբունքներով։

Աղալարական-բեգական գյուղացիները 1870-ական թթ. կազմում էին 425 տնտեսություն, որից 198-ը բնակվում էր Նոր Բայազետի, 25-ը՝ Ղազախի գավառներում և 182-ը՝ Լոռու գավառամասում[22]։ 1880-ական թթ. Լոռու գավառամասում և Ղազախի գավառում յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 5,8 դես. բաժնեհող։ Գյուղացիները օգտվում էին նաև աղաների արոտավայրերից։ Դեռ 1847 թ. ցարական կառավարությունը կանոնադրություն հրապարակեց աղաների ու բեգերի և գյուղացիների հարաբերությունների մասին, որը հայտնի է «Աղալարական կանոնադրություն» անունով։ Այդ կանոնադրության համաձայն գյուղացիները պարտավոր էին աղաներին ու բեգերին վճարել բերքի 1/10-ը («մալջաղաթ»), տանելով այն մատնանշված վայրը, տալ «չոփբաշի», այսինքն՝ արոտավայրերից օգտվելու համար տուրք, կատարել զանազան պարտավորություններ՝ ինչպես առանձին տնտեսություններով, այնպես էլ գյուղերով[23]։ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունն անփոփոխ թողեց աղաների, բեգերի ու գյուղացիների միջև սահմանված այդ հարաբերությունները։

Դժբախտաբար, մենք տեղեկություններ չունենք ինչպես թիուլդարական, այնպես էլ աղալարական-բեգական գյուղացիների հողօգտագործման եղանակների մասին։ Բայց հավանական է, որ նրանք նույնպես վարելահողերից օգտվում էին համայնական կարգով։ Այդ ենթադրության համար հիմք է ծառայում Ս. Ա. Եղիազարովի այն վկայությունը, որ ծխային հողօգտագործումը կիրառվում էր միայն մուլքադարական և պետական-մուլքադարական գյուղերում[24]։

Խիզանները բնակվում էին բացառապես Լոռու գավառամասում և 1884 թ. կազմում էին 233 ծուխ կամ 1055 արական շունչ։ Նրանք հողազուրկ գյուղացիներ էին, վարձակալական պայմաններով ապրում ու աշխատում էին կալվածատիրական տնտեսություններում և երբ լրանում էր պայմանագրի ժամկետը, նորից էին կնքում այն։ Իրավաբանորեն խիզանները համարվում էին ազատ գյուղացիներ, բայց փաստորեն կախյալներ էին, քանի որ մինչև չլրանար պայմանագրի ժամկետը, չէին կարող հեռանալ կալվածատիրոջից։ Մինչդեռ կալվածատերը ցանկացած ժամանակ կարող էր նրանց արտաքսել իր տնտեսությունից։

1864 թ. գյուղացիական ռեֆորմը Լոռու խիզանների վրա չտարածվեց։ Կառավարությունը նրանց մասին օրենք հրատարակեց 1891 թ. հունիսի 3-ին, որի համաձայն խիզանների ձեռքում էին մնում այն բոլոր տարածությունները, որ նրանք մշակում էին։ Դրա հետ միասին օրենքը պարտադրում էր նրանց շարունակել վճարումները հողատերերի օգտին։ Եթե կալվածատերը չէր ցանկանում խիզաններին հողամաս տալ, պետք է հատուցեր այլ միջոցներով, իսկ եթե խիզաններն էին հրաժարվում հողամասից, ապա այն, նրա վրա եղած

---

20 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 790/850, թ. 11. Обзор Эриванской губернии за 1887 г., с. 29—31.

21 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 790/850, թ. 11.

22 Տե՛ս Крестьянское движение в Армении..., с. 241.

23 Տե՛ս Полное собрание законов Российской империи. Т. XXII, 1847, № 21825.

24 С. А. Егиазаров. Указ. соч., с. 141.

բոլոր կառույցներով անցնում էր կալվածատիրոջը, առանց որևէ հատուցման[25]։ Այդպիսով 1891 թ. հունիսի 3-ի օրենքը թեև որոշ չափով դժվարացնում էր, բայց բնավ չէր արգելում խիզանների արտաքսումը կալվածատիրոջ կողմից։ Միայն 1393 թ. կալվածատերերը Մեծ Ղարաքիլիսայից վտարեցին 60 խիզանական ընտանիք, որոնք սեղափոխվեցին Կարսի մարզ և համալրեցին պետական գյուղացիների շարքերը[26]։

Գրականության մեջ տարբեր տեղեկություններ կան խիզանների հողաբաժինների մասին. ոմանք ցույց են տալիս, թե յուրաքանչյուր տնտեսություն ունեցել է միջին հաշվով 19 դես.[27], մյուսները՝ 12,8 դես.[28] ամեն տեսակ հող, բայց միաժամանակ գտնում են, որ այդ տվյալները չափազանցված են, իրականում ունեցել են դրանցից շատ պակաս սարածություններ։ Խիզանները կալվածատերերին վճարում էին ըստ պայմանավորվածության՝ մի տեղում բնավճարով, մյուսում՝ գրամով, երրորդում թե՛ մեկով և թե՛ մյուսով։ Բոլոր դեպքերում նրանց շահագործումը խիստ էր։ Այսպես, 1883 թ. Լոռու գավառամասում 233 խիզանական տնտեսություններ կալվածատերերին վճարել են 6061 ռ. 50 կ. կամ նրանցից յուրաքանչյուրը՝ շուրջ 30 ռ.[29]։ Դա, անշուշտ, մեծ դումար էր, մանավանդ եթե նկատի ունենանք, որ գյուղացու համախառն եկամուտը (օրինակ, Ղազախի գավառում) կազմում էր տարեկան 65 ռ.[30]։

Վանքապատկան գյուղացիները բնակվում էին հիմնականում Էջմիածնի, մասամբ Սանահնի, Հաղբատի և Օձունի հողատարածությունների վրա։ 1886 թ. Էջմիածնի հինգ գյուղերում (Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Եղվարդ և Մուղնի) ապրում էին 1293 տնտեսություն կամ 8435 անձ, որոնց օգտագործման համար տրված էր շուրջ 12000 դես. կամ՝ յուրաքանչյուր անձին 1,5 դես. ամեն տեսակ հող։ Այդ տարածության համար վանքը գյուղացիներից վերցնում էր մուլք (բերքի $^{4}/_{30}$-ը), թիուլ (բերքի $^{1}/_{10}$-ը և յուրաքանչյուր այգուց 2,20—2,80 ռ.) և հարկադրում էր նրանց զանազան պարտություններ կատարել։ 1860—1870-ական թթ. գյուղացիական ռեֆորմները չտարածվեցին վանքապատկան գյուղացիների վրա։ Իշխանությունները նրանց մասին հատուկ կետ հրապարակեցին 1912 թ. հողային օրենքում։

Արևելյան Հայաստանի կախյալ գյուղացիների շարքին պետք է դասել նաև մարաբաներին։ Նրանք չէին ձևակերպված պաշտոնական փաստաթղթերում։ Ի տարբերություն մյուսների, մարաբաներն ընկած էին ոչ թե հողի, այլ փողի ղերիշխանության տակ։ Օգտվելով գյուղացիների անելանելի գրությունից, վաշխառուները վարկավորում էին նրանց, խլում ունեցվածքը և ծանրաբեռնելով տոկոսներով ու նոր վարկերով՝ պարտադրում հատուցել այժմ աշխատանքով։ Այդ կերպ մի կողմից ձևականորեն պահպանվում էր գյուղացիական տնտեսությունը, իսկ մյուս կողմից ապահովվում էին վարկատու մշտական եկամուտները։ Մարաբաները ընչազուրկ գյուղացիներ էին։ Նրանց հողերը թեև իրավաբանորեն գտնվում էին իրենց օգտագործման տակ, բայց փաստորեն անցել էին վաշխառուների ձեռքը։ Մարաբայությունը շահագործման ամենածանր ձևերից մեկն էր։ Ս. Զավարովի վկայությամբ, այն մոտ էր ճորտատիրությանը։ Շահագործման այդ ձևից բոլորը վախենում էին։ Շատերը մարաբաներ էին, սա-

---

25 Տե՛ս Сельское хозяйство и аграрные отношения. Т. IV, составил П. В. Гугушвили. Тбилиси, 1955, с. 727—728.

26 Տե՛ս Аграрная политика царизма..., с. 230—232.

27 Տե՛ս В. А. Рштуни. Крестьянская реформа в Армении в 1870 г. Ереван, 1947, с. 273.

28 Տե՛ս Մ. Ա. Խոնդկարյան. Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից. Երևան, 1974, էջ 23։

29 Տե՛ս Сборник статистических данных... Приложение III, с. 28—29.

30 Տե՛ս Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края. Т. II, вып. III, Тифлис, 1885, с. 234.

կայն ամաչելուց թաքցնում էին իրենց դրությունը[31]։ Մարաբայությունը տարածված էր հիմնականում Կարսի մարզում և գալիս էր թուրքական տիրապետության ժամանակներից։

XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում առկա էր նաև հողազուրկ գյուղացիությունը։ Ըստ մեր ունեցած տեղեկությունների, 1860-ական թթ. նրանք կազմում էին Էջմիածնի գավառում՝ 800 մարդ, Նախիջևանի գավառում՝ 400 ընտանիք, իսկ Երևանի գավառում՝ բոլոր մուլքադարական գյուղացիների $^1/_3$-ը[32]։ Հետագա տասնամյակներում նրանց թիվը գնալով աճում էր։ Ս. Ա. Եղիազարովը նշում է, որ Երևանի նահանգում 1884 թ. կար 1877 հողազուրկ, որոնք բնակվում էին 55 գյուղերում[33]։ Իսկ Օրեստ Սյոմինը ցույց է տալիս, որ 1895 թ. այդ նահանգում նրանց թիվը հասել էր 1209 տընտեսության կամ 5211 մարդու[34]։ Մենք, դժբախտաբար, մանրամասն տեղեկություններ չունենք այդ գյուղացիների մասին, բայց հավանական է, որ նրանց մի մասը շահագործվում էր կալվածատերերի, իսկ մյուսը՝ կուլակների կամ գյուղական բուրժուազիայի կողմից։

Նշված ժամանակահատվածում արևելահայ գյուղում առաջացել էր բնակչության նաև մի նոր խումբ, որը պաշտոնական փաստաթղթերում հիշատակվում էր «ժամանակավոր կեցողներ» անունով։ Սկզբնական շրջանում, մասնավորապես 1850—1860-ական թթ. ցարական իշխանությունները այդպես էին կոչում գլխավորապես զինվորական ծառայողներին ու մասամբ վաճառականներին, բայց հետագայում՝ հատկապես 1880—1890-ական թթ.՝ արտագնացներին և գլխավորապես թուրքական հալածանքներից ու կոտորածներից փախած ու Անդրկովկասում հանգրվանած արևմտահայերին։ «Ժամանակավոր կեցողների» մեջ կային, իհարկե, նաև այլ դասերի մարդիկ, բայց նրանց մեծամասնությունը ընչազուրկներ, վարձու աշխատանքով ապրողներ էին։ 1896 թ. Կարսի նահանգապետը գրում էր, որ արևմտահայ փախստականները «չնչին բացառությամբ... ապրուստի սեփական միջոցներ չունեն։ Նրանք բավարարվում են խղճուկ դատումներով՝ գլխավորապես օրավարձով և մարդի գյուղերում հովվությամբ զբաղվելով»[35]։

Ի տարբերություն հողազուրկ գյուղացիների, որոնք համարվում էին այս կամ այն գյուղի մշտական ապրողները, «ժամանակավոր կեցողները» համարվում էին տվյալ վայրի հենց ժամանակավոր բանվորներ։ Նրանցից շատերը թեպետև տասնամյակներ շարունակ ապրում էին միևնույն տեղում, այնուամենայնիվ իշխանությունների կողմից արձանագրվում էին որպես «ժամանակավոր կեցողներ»։ Հատկանշական է, որ արտագնացության աճի և արևմտահայերի Ռուսաստան սարագրվելու հետևանքով նրանց թվաքանակը գնալով մեծանում էր։ Այսպես, Կարսի մարզում 1888 թ. հաշվվում էր 10416, իսկ 1900 թ.՝ 33094 երկու սեռի «ժամանակավոր կեցող»[36]։ Նրանց մեծ մասը բնակվում էր գյուղում։ 1897 թ. մարդահամարի տվյալներով Երևանի նահանգում հաշվվում էր 8288 «ժամանակավոր կեցող», որից 6207-ը՝ գյուղերում, իսկ 2081-ը՝ քաղաքներում[37]։

Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական խմբերից պետք է հիշատակել նաև սեփականատերերին։ Նրանք խիստ սակավաթիվ էին. դարավերջին կազմում էին 203 տնտեսություն և բնակվում էին Ղափանում, Ալա-

---

31 Տե՛ս С. Заваров. Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899, с. 289.

32 Տե՛ս С. Эсадзе. Историческая записка об управлении Кавказом. Т. I, Тифлис, 1907, с. 558—559.

33 Տե՛ս С. А. Егиазаров. Указ. соч., с. 71—72.

34 Տե՛ս О. Семин. Великая годовщина. Киев, 1911, с. 21.

35 Обзор Карсской области за 1896 г., с. 5.

36 Տե՛ս Обзор Карсской области за 1888 г., с. 8, за 1900 г., с. 3.

37 Տե՛ս Памятная книжка Эриванской губернии на 1906 г., отд. IV, с. 159.

վերդիում, Սիսիանում ու Աշտարակում[38]։ Սեփականատերերի հողաչափերի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել հետևյալ տվյալներով. 1872 թ. Նախիջևանի գավառի Բանանիյար գյուղում նրանք հաշվվում էին 22 տնտեսություն և ունեին 43,2 դես. վարելահող, այգի և տնամերձ կամ՝ յուրաքանչյուր տնտեսություն՝ մոտ 2 դես.[39]։

Դժբախտաբար, մեր ձեռքի տակ չկան տեղեկություններ այն մասին, թե ինչ իրավունքներ ունեին թիուլգարական, աղալարական-բեգական, վանքապատկան և այլ կատեգորիաների գյուղացիները։ Կարելի է ենթադրել, որ նրանք նույնպես օժտված էին համարյա այն իրավունքներով, ինչ մուլքադարական գյուղացիները։

Այդպիսով, XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում կային գյուղացիության սոցիալական մի շարք խմբեր, որոնք, ինչպես արդեն դժվար չէ համոզվել, տարբերվում էին միմյանցից իրենց թվաքանակով, հողատիրման բնույթով, հողաբաժնի չափերով, վճարած հարկերով, շահագործման աստիճանով, արտատնտեսական հարկադրանքի ձևերով, քաղաքացիական իրավունքներով և այլ ցուցանիշներով։

Համեմատաբար տանելի էր պետական գյուղացիների դրությունը, որոնք մյուսներից շատ հող ունեին, քիչ հարկեր ու տուրքեր էին վճարում, քիչ էին ենթարկվում արտատնտեսական հարկադրանքի և ավելի շատ քաղաքացիական իրավունքներ ունեին։ Ամենածանրը կալվածատիրական գյուղացիների դրությունն էր, որոնք համեմատաբար քիչ հող ունեին, շատ հարկեր ու տուրքեր էին վճարում (բացի կալվածատերերից նրանք զանազան հարկեր էին տալիս նաև պետությանը), շատ էին ենթարկվում արտատնտեսական հարկադրանքի։ Կալվածատիրական գյուղացիներից ամենաանտանելին, ինչպես ճիշտ են նկատել ուսումնասիրողները, բարձր դասին պատկանող հողատերերի իշխանության տակ ընկած գյուղացիների դրությունն էր։ Իշխանությունները այդ հողատերերին դիտելով իբրև իրենց ավելի հուսալի հենարաններ, նրանց համար որոշակի արտոնություններ էին սահմանել և պայմաններ ստեղծել «իրենց» գյուղացիներին անխնա շահագործելու և հարստահարելու համար։ Փոքր-ինչ այլ էր վանքապատկան գյուղացիների դրությունը. Հաղբատում և Սանահնում նրանք վանքերից բացի զանազան տուրքեր էին տալիս նաև պետությանը, իսկ Էջմիածնում ազատված էին պետական հարկերից։ Բայց իշխանությունները դեռ 1836 թ. իրենց բաժինը դիջել էին Էջմիածնին[40], հետևաբար՝ Էջմիածնի գյուղերն էլ ենթարկվում էին կրկնակի հարստահարման։ Համեմատաբար գերադասելի էր սեփականատեր գյուղացիների դրությունը, որոնք ազատ էին կալվածատիրական կեղեքումներից և պետական մի շարք հարկերից ու տուրքերից։

Սոցիալական այդ խմբերում գյուղացիներն անցնում էին մեկից մյուսը։ Երբեմն պետական որոշ գյուղացիներ, գլխավորապես կիսաքոչվորներն ու քոչվորները, հարկադրված հաստատվում էին կալվածատիրական հողերի վրա և դառնում կալվածատիրական գյուղացիներ։ Երբեմն գյուղացիները տերունական մեկ կախումից անցնում էին մյուսին։ Սակայն ավելի հաճախ կալվածատիրական գյուղացիները, տեսնելով պետական գյուղացիների համեմատաբար տանելի վիճակը, անցնում էին նրանց շարքերը։ Մի շարք գյուղեր (Արարատյան դաշտում, Սևանի ավազանում ու մասամբ Լոռու գավառամասում) համառ պայքարով կարողացան ազատվել մուլքադարական, թիուլգարական, աղալարական-բեգական լծից և դառնալ պետական։ Բայց արևելահայ գյուղում XIX դարի երկրորդ կեսին ամենամեծ տեղաշարժը ապրանքային տնտեսության զարգացման հետևանքով առաջացած գյուղացիության սոցիալական շերտավորումն էր։ Այդ շերտավորումը հողատիրության ասպարեզում հետևյալ պատկերն էր ներկայացնում. 1884 թ. Երևանի նահանգում հաշվվում էր 51105

38 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 5, էջ 63։

39 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 16, թ. 13։

40 Տե՛ս Аграрная политика царизма..., с. 84.

պետական գյուղացիական տնտեսություն կամ 430116 մարդ։ Նրանցից հողազուրկ էին 1389 մարդ, մյուսները ունեին. մինչև 0,5 դես. վարելահող՝ 68111 մարդ, 0,5—1 դես.՝ 202950, 1—2 դես.՝ 142339, 2—3 դես.՝ 11770, 3—5 դես.՝ 2135, 5—7 դես.՝ 1422 մարդ։ Այդ տվյալները ցույց են տալիս, որ պետական գյուղացիությունը տրոհված էր հողազուրկների, սակավահողների, հողով բավարարվածների և ավելի քան բավարարվածների։

Սոցիալական շերտավորումը առկա էր նաև կալվածատիրական գյուղում։ Ըստ մեր հաշվումների, որոնք կատարված են 1872—1873 թթ. կանոնագրերի հիման վրա, գյուղացիների ներքոհիշյալ խմբերը ունեին հետևյալ քանակությամբ վարելահող[42]։

Կալվածատիրական գյուղացիության խմբերը	անտ. թիվը	տղամ. թիվը	հողազուրկ. թիվը	Տնտ. թիվը, որ ունեն վարելահող (դես.)								
				մինչև 1	1—2	2—3	3—5	5—7	7—10	10—15	15—30	30 և ավելի
Բարձր դասին պատկանող գյուղացիներ	1186	5088	7	117	112	137	199	132	238	176	62	6
Բարձր դասին չպատկանող գյուղացիներ	154	565	—	5	14	22	35	17	13	15	28	5
Պետ. մուլքաղարական գյուղ.	16	25.5	—	20	20	4	13	5	3	1	—	—

Այդ տվյալները չեն ընդգրկում կալվածատիրական բոլոր գյուղերը, բայց ընորոշ են նրանց բոլորի համար։ Դրանք ցույց են տալիս, որ բազմաթիվ սակավահող տնտեսությունների կողքին արդեն առկա էին նաև այնպիսիները, որոնք ընդարձակ տարածություններ ունեին։ Եվ այդ շերտավորումն առաջացել էր թե՛ բարձր դասին պատկանող հողատերերի, թե՛ այդ դասին չպատկանող հողատերերի և թե՛ պետական-մուլքաղարական գյուղերում։ Աղյուսակում հիշատակվում է միայն 7 հողազուրկ գյուղացիական տնտեսություն, բայց իրականում նրանց թիվը, ինչպես արդեն ցույց տրվեց, անհամեմատ ավելի էր։ Խնդիրն այն է, որ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը չէր նախատեսում հողազուրկներին հող տալ։ Եվ ցարական պաշտոնյաները կանոնագրերը կազմելիս, իրրև կանոն, դանց էին առնում նրանց։

Սոցիալական շերտավորումը, Նախիջևանի գավառի Բանանիյար գյուղի օրինակից դատելով, ավելի խորն էր արտահայտվել սեփականատեր գյուղացիների խմբում։ 1872 թ. այդ գյուղում 22 տնտեսություններ ունեին 43,2 դես. վարելահող, այգի։ Նրանցից 15-ը ուներ 120 քառ. մետրից մինչև 1 դես., իսկ 2-ը՝ ավելի քան 24 դես.[43]։

Փոքր-ինչ այլ էր սոցիալական շերտավորման պատկերը վանքապատկան գյուղերում։ Վաղարշապատում 1883 թ. եղած 225 տնտեսություններից շուրջ 90-ը ուներ մինչև 2,5 սոմար[44] (շուրջ կես դես.), իսկ 16-ը՝ 10—30 և ավելի սոմար այգի[45]։ Դա ցույց է տալիս, որ միջակ տնտեսությունները վանքապատկան գյուղերում համեմատաբար շատ էին։

Գյուղացիության սոցիալական շերտավորումը արտահայտվում էր նաև անասնապահության գծով։ Ցավոք, մեր ձեռքի տակ եղած աղբյուրները հնարավորություն չեն տալիս ներկայացնելու այն առանձին գյուղախմբերում։ Սակայն կան տվյալներ, որոնք ընդհանուր առմամբ բնութագրում են այդ պրոցեսը։ Դրանցից մեկը 1874 թ. պաշտոնյաների կողմից կազմած Էջմիածնի գավառի Սուրմալուի գավառամասի 42 արքունական ու կալվածատիրական գյու-

41 ՏԼ՚ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 396, ց. 2, գ. 1160։

42 ՏԼ՚ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, № 91 ֆոնդի նշված գործերն ու թերթերը։

43 ՏԼ՚ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 16, թ. 13։

44 5 սոմարը—2500 քմ կամ շուրջ 1 դեսյատինի։

45 ՏԼ՚ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 6, գ. 76, թ. 50—55։

դերի ցուցակներն են, որոնցում արձանագրված են բնակիչների ազգանունները և նրանց ունեցած անասունների գլխաքանակը[46]։ Հաշվումները ցույց են տալիս, որ այդ գյուղերում եղած 910 տնտեսություններից 85-ը բոլորովին չուներ բանող անասուն, 335-ը ուներ 1-ական զույգ, 358-ը՝ 2-ական, 83-ը՝ 3-ական, 28-ը՝ 4-ական և, վերջապես, 21-ը՝ 5-ական և ավելի զույգ բանող անասուն։

1880-ական թթ. առաջին կեսին ցարական պաշտոնյաների հավաքած տվյալները, ինչպես և 1890-ական թթ. առանձին աղբյուրներում եղած տեղեկությունները ավելի լայն հնարավորություն են տալիս ներկայացնելու գյուղացիության սոցիալական շերտավորման պատկերը անասնապահության գծով։ Բայց այդ տեղեկություններն արդեն օգտագործված են սովետական պատմաբանների ու տնտեսագետների՝ Վ. Հ. Իշտունու, Հ. Ե. Թումանյանի, Օ. Մ. Հովհաննիսյանի, Մ. Հ. Ադոնցի և այլոց ուսումնասիրություններում, ուստի ավելորդ ենք համարում կանգ առնել գրանց վրա։

Գյուղացիության սոցիալական այդ խմբերը թեպետև իրարից տարբերվում էին զանազան հատկանիշներով, բայց կապված էին միմյանց հետ արտատական շահերով. նրանք բոլորը նյութական բարիքներ արտադրողներ էին, ավելի կամ պակաս չափերով հարստահարվում ու կեղեքվում էին վերնաշերտերի կողմից, պայքարում էին հողի և ազատության համար։

СОЦИАЛЬНЫЙ СОСТАВ КРЕСТЬЯНСТВА В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX в.

Доктор ист. наук А. С. АМБАРЯН

Резюме

Во второй половине XIX в. в Восточной Армении все еще сохранялись присущие феодализму разные категории крестьянства: государственные крестьяне, мулькадарские, тиульдарские, монастырские и др. Эти группы различались своим количеством, размерами надельной земли, уплатой податей и повинностей, степенью эксплуатации и другими показателями. В условиях развития товарно-капиталистических отношений все группы крестьянства экономически разлагались, в результате чего в деревне образовались сельская буржуазия и пролетариат.

---

46 Նույն տեղում, ֆ. 107, ց. 1, գ. 62 և 63։